ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԳԵՐՄԱՆԻԱ.

Բողոքական ուսանողութիւնը գերմանական 17 համալսարաններում, որոնք աստուածաբանական ֆակուլտետներ ունեն, 1906 թուի ուսումնական տարուայ վերջամսեակին եղել են 2208 բողոքական աստուածաբանութեան ուսանողներ:

Նախորդ տարուայ ամառը 2329 հոգի, իսկ ձմեռը 2186. 1905 թուի ամառը 2286 հոգի, 1881 թուի ամառը 4799 հոգի:

Եթէ, վիճակագրական տեղեկութիւնների համաձայն, հաշուենք լինենք օտարերկրացի ուսանողների թիւը՝ պետութեան հպատակ ուսանողների թուից, այս անցած կէս տարուայ համար կստանանք 2023 հոգի. 1906 թուի ամառուայ համար 2123 հոգի նախանցեալ ձմեռուայ սեմեստրի համար 1996 հոգի, 1882 թուի ամառուայ համար 2605 հոգի. իսկ 1880 թ. վերջին սեմեստրի համար 4,400 հոգի:

Ըստ այսմ աւետարանական հոգևորականութիւնը չի աւելանում, այլ ընդհակառակն պակասում է: Իսկ ինչ վերաբերում է առանձին ֆակուլտետներին, որոնցից առաջին տեղը բռնում է Բերլինինը՝ 1906 թուի ձմեռը ունեցել է 384 ուսանող, իսկ ամառը 286. ապա հետևում են՝ Հալլէ 334 (318), Լայպցիգ 323 (312), Տումբինգեն 230 (324), Էրլանգեն 130 (148), Մարբուրգ 109 (144), Գեոտինգեն 100 (115), Գրայֆսվալտ 82 (102), Քեոնիգսբերգ 76 (174). Շտրազբուրգ 71 (63), Գիսեն 66 (73), Բրեսլաու 63 (61), Բոնն 59 (83), Հայտելբերգ 53 (54), Ռոստոք 51 (60), Ենա 47 (57), Քիլ 30 (38):

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ *

Գերմանիայի այսպէս կոչուած բողոքականների մեծ ընկերութիւնը Ապրիլի 12-ին Բերլինում բողոքի մի մեծ ժողով էր գումարել, ուր ուսուցչապետ իրաւաբ. դր. Գերֆկեն մի դասախօսութիւն կարդաց հռենոսվեստֆալեան «աւետարանական ազատութեան բարեկամների» շարժման մասին:

---

* Այս ընկերութիւնը կազմուած է ղէպի ծախ հակուած ազատ բողոքականներից, որոնք աստուածաբանութեան մէջ բացիոնալիստականութեան աւելի նշանակութիւն են տալիս.